«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

ՈՐՈՇՈՒՄ N 4

1 նոյեմբերի 2019 թվականի

«Ամբերդ տեղեկագիր» գիտահանրամատչելի հանդես հրատարակելու մասին

Լսելով և քննարկելով **««Ամբերդ տեղեկագիր» գիտահանրամատչելի հանդես հրատարակելու մասին»** հարցը (զեկուցող՝ գիտության գծով պրոռեկտոր, տնտեսագիտության դոկտոր Թ.Մ.Մկրտչյան), հիմք ընդունելով «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 17-րդ կետի 8-րդ ենթակետը, գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Հրատարակել «Ամբերդ տեղեկագիր» գիտահանրամատչելի հանդեսը՝ տարեկան 6 անգամյա պարբերականությամբ:

2. Գիտության գծով պրոռեկտոր Թ.Մ.Մկրտչյանին՝ ապահովել հանդեսի հրատարակման և առաքման (տարածման) հետ կապված անհրաժեշտ գործողությունների իրավական հիմքերը:

3. Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել գիտության գծով պրոռեկտոր Թ.Մ.Մկրտչյանին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Ռ. Գալոյան**

2019 թ. նոյեմբերի 1
Երևան